սոյն (s!) իւրոյ Թամսերին, ձեռամբ սրբասնել և պատուական Յովանէսի ի սբ ուխտէն, որ կոչի Թանատի



Պապաքի վիմափոր ժամատան սյունը. **Պատկեր 52.**

վանս, որ մեծաւ աշխատուք գրեաց զսայ և նկարեաց ըստ իւրում կարողութեան . . . *»։

* Սույն Զ-ի հիշատակարանը տալիս է մեզ մի կարևոր նորություն, վոր մինչև այժմ ձեռքի տակ ունեցած աղբյուրներով դեռ հայտնի չեր. այսինքն, Գնդեվանքն ել Պռոշյանց իշխանության սահմանների մեջ եր մտնում, բայց անմիջական սեպհականություն եր սուորաղաս իշխանական մի ուրիշ տոհմի, վորի մի ներկայացուցիչը «պատրոն Դաւիթ», յուր ամուսին Թամսերի հետ հիշվում է այստեղ։ Խաղբակյանց կամ Պռոշյանց նոր իշխանության սահմանների քննության մեջ (Գլ. Գ. եջ. 47) մենք գրել ելինք, թե «Մարաթուսից դեպի հյուսիս՝ մինչև Քիշնեի վտակը՝ Քոչպէկ, Թերփ և Թարփ ... գիւղերով, հաւանօրեն, պատկանում էր Պռոշեաններին,

Մարտիրոս գյուղի Խաչ-դերեսիում (Խաչաձոր) յեղած արձանագրությունը թվագրված է յերկու յեղ-

Պապաքի վիմափոր ժամատան սյունը. **53.**

բայրների իշխանությամբ 1288 թվին՝ առաջին տեղը Պապաքին տալով.

որովհետև Շահապունեաց, Զուլի և Քիշնեի ակունքներով են Վայոց ձորն ու Շահապունիքը սահմանամերձ դառնում Բարկուշատին». այս հիշատակարանը միանգամայն հաստատում է մեր ենթադրության ճշմարտությունը, Գնդեվանքն ել մեջն առնելով, վոր շատ քիչ հեռու է Թարփ գյուղից։ Հիշատակարանի մեջ հիշատակված Սարգիս յեպիսկոպոսը Նորավանքի աթոռակալն եր, Ստեփանոս Որբելյանից առաջ և նորա ժամանակ, միայն պատմիչը ձեռնադրությունից հետո նախաթոռ հանդիսանալով Տաթևի և Նորավանքի ժամանակակից յեպիսկոպոսների մեջ (Որբելյան. 418, 429, 461, 480, 499)։ Սարգիս յեպիսկոպոսի հիշատա-